30 **Գշ. ԴԿ.** Սրբոցն Դանիէլի մարգարէին եւ երից մանկանցն՝ Սեդրակայ, Միսաբայ եւ Աբեղնագովի: Օրհ. ալ. *Որ զաստուածային*: Յրգ. ալ. *Որ բարձրեալդ եւ: Ողորմեա եւ Տէր յերկնիցն՝ զՄարգարէիցն ասա: Ողորմեա աձ. Որ զծածկեալ: Տէր յերկնից աձ. Երգս առեալ: Մնկ. եւ Յմբ. դձ. Որ զյառաջագոյն: Ժմտ. Որ ի վերայ քերովբէիցն*: Ճշ. շրկ. աձ. *Ճառագայթ*:



# ՅՈՒՆԻՍ

31 ՕՐ



ԽԵՅՉԵՏԻՆՆ

- 1 **ԴՆ. ԱԶ. Պահք:** Օրհ. Ապշ. ած. Հայր 10  
*բապունողորմ: Հրց. Աղցմի. ած. Եր-*  
*գէին մանկունքն: Ժմտ. Որ ըստ ամե-*  
*նայն: Եշ. շրկ. դկ. Փառաբանութիւն:*  
*Հմբ. ած. Ինձ օգնութիւն եւ Համբար-*  
*ձի: Նախատօնակ: Շրկ. ակ. Որք*  
*վարդարեցին, իւր սարօքն:*
- 2 **ԵՇ. ԱԿ. Սրբոց թարգմանչաց հարցն 11**  
*մերոց Սահակայ եւ Մեսրովբայ:*  
*Օրհ. ակ. Որք վարդարեցին, իւր սա-*  
*րօքն (յատեանն): Մնկ. եւ Հմբ. գծ. Նմա-*  
*նեալ Մովսիսի: Ժմտ. Չհայրապետա-*  
*կանն: Եշ. շրկ. դծ. Որ վշնորիս: Սրբ.*  
*Ամենակալ:*

**Եկեղեցական հանդէս յՕշական:**

**Տօն ազգային:**

- 3 **Ուր. ԲԶ. Պահք:** Օրհ. Ապշ. բծ. Դար- 12  
*ձոստումն: Հրց. Հնգ. գծ. Օրինեմք:*

Օ

ՅՈՒՆԻՍ

107

Լ

- Մնկ. *Խաչի* բծ. *Ապախնեցաք:* Ժմտ.  
*Որ ըստ ամենայն: Եշ. շրկ. դկ. Որ*  
*անակիւքն: Հմբ. բծ. Համբառնալով:*
- 4 **Շբ. ԲԿ. Սրբոցն Տրդատայ թագա- 13**  
*ւորին մերոյ, Աշխէնի տիկնոջն եւ*  
*Խոսրովիդիստոյն: Օրհ. ակ. Որ վերկ-*  
*նաւոր, իւր սարօքն: Մնկ. դծ. Որ գե-*  
*րագոյն: Ժմտ. Որպէս յետ աստուա-*  
*ծասէր թագ.: Եշ. շրկ. բծ. Աստուած*  
*փրկիչ մէր: Ճշ. ընթ. (Իմս. 6.2-10: Ես. 45.1-3:*  
*ԱՏմ. 2.1-7: Դկ. 11.14-23):*
- Յերեկոյին՝ *Լոյս զուարթ: Ս. Աս-*  
*տուած՝ որ յարեար: Հմբ. ած. Սուրբ եւ*  
*Տէր եւ Երկնաբաղաբացին: Նախա-*  
*տօնակ: Շրկ. ակ. Որ նախիմաց, իւր*  
*սարօքն: Բրգ. Ս. Վատուածածինն,*  
*Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:*
- 5 **† Կիր. ԳԶ. Ե կիր. Չկնի Հոգեգա- 14**  
*լստեան: Տօն գիւտի տփոյ Սրբուհոյ*  
*Աստուածածնի: Հնգ. շրկ. ի ձայնէն:*  
*Չկնի պաշտաման Տաճարի Աւետա-*  
*րանի՝ Ռահ գործեալ: Ապա երգ՝ Չայ-*  
*նիւ առ քեզ: Օրհ. գկ. Երգեցէք որդիք,*  
*իւր սարօքն: Բրգ. Մայր Սուրբ: Ս.*  
*Աստուած՝ որ յարեար: Ժմտ. Միածին*  
*Որդի: Եշ. շրկ. գծ. Չթագաւորն Բրիս-*

|   |     |        |   |
|---|-----|--------|---|
| Օ | 108 | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|-----|--------|---|

տոս:Ճշ. ընթ. (Ես. 2.5-11: Հռ. 8.31-10.4: Մտ. 13.24-30):

Յերեկոյին՝ Քրգ. Մայր Սուրբ: Յմբ. դձ. Նոր Սիոն: Քրգ. Ս. Վատուածածինն, Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:

☺ Լրումն Լուսնի:

6 Բշ. ԳԿ. Սրբոցն Կալիստրատոսի, 15  
բառասուն եւ ինն վկայիցն եւ Ղուն-  
կիանոսի բահանային: Օրհ. Մրտ. գկ. Այսօր հրեշտակաց: Յրց. Մրտ. բձ. Բ. Ընդ սուրբս: Մնկ. գկ. Ընդ զուար-  
թունս: Ժմտ. Ի տաճարի: Եշ. շրկ. գկ. Ծգնատրք ճշմարիտ: Յմբ. գկ. Այսօր  
մարտիրոսաց դասքն:

7 Գշ. ԴՁ. Սրբոյն Չաբարիայի մարգա- 16  
րէին: Օրհ. ալ. Որ վատուածային: Յրց. աձ. Որ յերկնային, իւր սարօքն: Մեծ. աձ. Չքեկ երեւեալ: Մնկ. եւ Յմբ. դձ. Որ պառաջագոյն: Ժմտ. Տէր որ  
հիմնեցուցեր: Եշ. շրկ. աձ. Ճառա-  
գայթ:

8 Դշ. ԴԿ. Պահբ: Օրհ. Ապշ. դկ. Զրիս- 17  
տոս Ատուած յոյս: Յրց. Ապշ. աձ. Ե. Բարեբանեալ ես: Մնկ. դկ. Է անուն  
Տեառն: Ժմտ. Որ ըստ ամենայն: Եշ.

|   |  |        |     |   |
|---|--|--------|-----|---|
| Օ |  | ՅՈՒԼԻՍ | 109 | Լ |
|---|--|--------|-----|---|

շրկ. դկ. Փառաբանութիւն: Յմբ. դկ. Մոցեն:

9 Եշ. ԱՁ. Սրբոյն Եղիսէի մարգարէին: 18  
Օրհ. ալ. Որ վատուածային: Յրց. դձ. Որ ընդ հողեղէն: Մեծ. դձ. Որ ի  
բարձրութիւնս: Մնկ. դկ. Այսօր ցնծայ: Ժմտ. Տէր որ հիմնեցուցեր: Եշ. շրկ. աձ. Ճառագայթ: Յմբ. դձ. Որ պառա-  
ջագոյն:

10 Ուր. ԱԿ. Պահբ: Օրհ. Ապշ. ալ. Ծով 19  
կենցաղոյս: Յրց. գկ. Բանդ Ատուած: Մնկ. Խաչի ալ. Սեղան քո Տէր: Ժմտ. Որ ըստ ամենայն: Եշ. շրկ. դկ. Որ  
անսկիւրն: Յմբ. ալ. Օգնական:

11 Ծբ. ԲՁ. Սրբոց երկոտասանից առա- 20  
քելոցն Քրիստոսի եւ Սրբոյն Պօղոսի  
երեքտասաներորդ առաքելոյն: Օրհ. գձ. Երանելի սուրբ, իւր սարօքն: Մնկ. դկ. ստդ. Առաքեալք Ատուծոյ: Ժմտ. Առաքեալք եւ վկայք: Եշ. շրկ. ալ. Ի  
յանասահման: Ճշ. ընթ. (Իմս. 9.9-10.2: Ելք. 15.23-27: Ա Թս. 2.9-16: Մտ. 9.36-10.7): Յմբ. աձ. Սուրբ եւ Տէր եւ Ի քէն հայցեմք:

12 † Կիր. ԲԿ. 2 Կիր. Չկնի Յոգեգալս- 21  
տեան: Օրհ. բկ. Փարաւօն: Յրց. ալ. Որ վասն մերոյ: Մեծ. Նոր խորանիդ:

Ժմտ. *Միածին Որդի*: Եւ. շրկ. բկ. *Օրինություն ի բարձունս*: Ճշ. ընթ. (Ես. 3.1-11: Հռ. 11.13-24: Մտ. 14.13-21): Յմբ. բկ. *Քոյաբուծեանդ*:

**Բարեկենդան Վարդավառի պահոց:**

**Յայսմ աւուր կատարի հոգեհանգիստ վասն հոգւոցն Մայր Տաճարի յաւետ օրինեալ հովանաւորացն Մանուկեան տոհմի ննջեցելոց. նաեւ երախտարժան բարերարացն ազգիս Հայոց**

**Ալէք եւ Մարի Մանուկեանց:**

**Օ Վերջին բառորդ Լուսնի:**

**13 Բշ. ԳՁ. Ա օր Վարդավառի պահոց:** 22

Օրհ. Ապշ. գձ. *Չերծոյ քիս*: Հրց. աձ. *Չ. Բարեբանեալ ես*: Մնկ. գձ. *Չքեզ բարեբանեն*: Ժմտ. *Որ ի Յօրէ*: Եւ. շրկ. գձ. *Քրիստոս Աստուած*: Յմբ. գձ. *Չօրհներգությունս եւ Պահապան*:

**14 Գշ. ԳԿ. Բ. օր Վարդավառի պահոց:** 23

Օրհ. Ապշ. գկ. *Քրիստոս Աստուած*: Հրց. ակ. *Ա. Չանուն քո Քրիստոս*: Մնկ. գկ. *Օրհնէքէք զՏէր*: Ժմտ. *Որ ի Յօրէ*: Եւ. շրկ. գձ. *Քրիստոս Աստուած*: Յմբ. գկ. *Տուր մեզ Տէր եւ Հովանի*:

**15 Դշ. ԴՁ. Գ. օր Վարդավառի պահոց:** 24

Օրհ. Ապշ. դձ. *Համբարձում*: Հրց. ակ. *Բ. Որ իտնարիեցար*: Մնկ. դձ. *Մանկունք զՏէր*: Ժմտ. *Որ ըստ ամենայն*: Եւ. շրկ. դկ. *Փառաբանություն*: Յմբ. դձ. *Չքեզ կարդամք*:

**16 Եշ. ԴԿ. Դ. օր Վարդավառի պահոց:** 25

Օրհ. Ապշ. դկ. *Քրիստոս Աստուած*: Հրց. ակ. *Գ. Աստուած հարցն մերոց*: Մնկ. դկ. *Է անուն Տեառն*: Ժմտ. *Որ ի Յօրէ*: Եւ. շրկ. գձ. *Քրիստոս Աստուած*: Յմբ. դկ. *Մոցեն աղօթք իմ*:

**17 Ուր. ԱՁ. Ե. օր Վարդավառի պահոց:** 26

Օրհ. Ապշ. աձ. *Հայր բապտիզմորս*: Հրց. Յնգ. դձ. *Որ փառօք*: Մնկ. *Խաչի աձ. Հրաշակերտ եւ զօրեղ*: Ժմտ. *Որ ըստ ամենայն*: Եւ. շրկ. բկ. *Որ յանէից*: Յմբ. աձ. *Ինձ օգնություն եւ Համբարձի*:

**18 Ծբ. ԱԿ. Յիշատակ Տապանակին** 27

**հնոյ եւ տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ:** Չկնի *Ճանապարհ մոլորելոցն երգ` Շինող Էիցս*: Օրհ. ակ. *Չքեզ բաղաք Աստուծոյ, իւր սարօքն: Ս. Աստուած` որ իաչեցար*: Մնկ. ակ. *Որ ի սկզբանէ*: Չկնի *Մանկանցն Քրդ. Ս. Եկեղեցեաւս, Կեցո, Աղթ. Առ դրան*



|   |     |        |   |
|---|-----|--------|---|
| Օ | 112 | ՅՈՒՆԻՍ | Լ |
|---|-----|--------|---|

սուրբ տաճարիս: Ժմտ. *Չխաղաղութիւն:* Եշ. շրկ. ալ. *Որ ի սկզբանէ:* Ծշ. ընթ. (Ելք. 25.10-14: Յս. 3.14-4.18: Ա թգ. 6.18-7.2: Բ թգ. 6.12-19: Եբր. 9.1-10: Մտ. 5.17-20):

Յերեկոյին՝ *Լոյս զուարթ:* Ս. Աստուած՝ որ խաչեցար: Յմբ. ած. *Որ ի լերինն այլակերպեալ* (յատեանն): Բրգ. *Խնդր., Կեցո, Աղթ. Թագ. խաղաղութեան:*

#### Նաւակատիք:

19 † Կիր. ԲԶ. ՊԱՅՅԱՆԱԿԵՐՊՈՒ 28

*ԹԻԲՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ (Վարդավառ):* Ի գիշերին հսկումն է եւ դիցեն *վՍրբութիւնն* ի վերայ բազմոցի *Սեղանոյն:* Չկնի *Ժողովեալքսին* երգ՝ *Ի վերին Երուսաղէմ:* Օրհ. ած. *Որ ի լերինն այլակերպեալ* (յատեանն): Յրգ. ալ. *Չանճառելի,* իւր սարօքն: (*Տէր, լերկնիցն* եւս յատեանն): Բրգ. *Ասասցուք: Ս. Աստուած՝ որ յայտնեցար ի Թաքոր լերինն:* Շրկ. ած. *Որ ի լերինն:* Գիրք, Աւտրն., *Անդաստան,* Բրգ. Ս. *Խաչիս, Աղթ. Պահպանիչ:* Շրկ. սող. դկ. *Լերինք ցնծացեն* (յատեանն): *Նորաստեղծեալ,* Բրգ. *Խնդր., Կեցո, Աղթ. Զում ամենապօր եւ հրա-*

|   |  |        |     |   |
|---|--|--------|-----|---|
| Օ |  | ՅՈՒՆԻՍ | 113 | Լ |
|---|--|--------|-----|---|

*շալի պայծառակերպութեանդ:* Ժմտ. *Երեւի Տէրդ պսօր:* Եշ. շրկ. դկ. *Ուրախացիր պսակ:* Ծշ. ընթ. (Իմս. 7.25-8.4: Չք. 14.16-21: Ա Յհ. 1.1-7: Մտ. 16.13-17.13): Սրբ. *Բապնութիւնք:*

Յերեկոյին՝ Գիրք, Աւտրն., *Անդաստան:* Ապա *Խոնարհեցո* եւ *Ապրեցո:* Բրգ. *Ասասցուք: Ս. Աստուած՝ որ յայտնեցար ի Թաքոր լերինն:* Յմբ. դկ. *Այսօր ի լերինն* (յատեանն): Չկնի *Յայր գթածին՝ Սաղմոս, Գիրք, Աւտրն., Բրգ. Խնդր., Կեցո, Աղթ. Թագ. խաղաղութեան:*

#### Միջոց ուտիքն երեք շաբաթ է:

20 † ԲԶ. ԲԿ. Բ. օր Վարդավառի: Օրհ. 29  
րկ. *Ճառագայթ փառաց,* իւր սարօքն: Մեծ. դծ. *Աստուածածին գերագոյն քերովրէից:* Բրգ. *Ասասցուք:* Մնկ. րկ. *Օրհնեցէք մանկունք* (յատեանն): Աղթ. *Սուրբ եւ Տէր:* Գիրք, Աւտրն., *Արարչական,* Բրգ. *Խնդր., Կեցո, Աղթ. Զում ամենապօր:* Ժմտ. *Երեւի Տէրդ:* Եշ. շրկ. րկ. *Ճառագայթ:* Ծշ. ընթ. (Ելք. 19.9-13: Դ թգ. 2.9-12: Ա Յհ. 5.9-12: Յհ. 1.1-17): Սրբ. *Վասն յիշատակի:*

**Չկնի Սրբոյ Պատարագի կատարի  
Հոգեհանգիստ վասն համօրէն  
ննջեցելոց:**

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ**

Յերեկոյին՝ Յմբ. բկ. *Օրհնեցէք  
մանկունք* (յատեանն): Բրգ. *Խնդր., Կե-  
ցո, Աղթ. Թագ. խաղաղութեան:*

**● Ծնունդ Լուսնի:**

- 21 **ԳՂ. ԳԶ. Գ.** օր Վարդավառի: Օրհ. 1  
գձ. *Այսօր որ Էնն*, իւր սարօքն: Մեծ.  
դկ. *Աստուածածին պայծառ:* Մնկ.  
դկ. ստղ. *Լերինք ամենայն* (յատեանն):  
Գիրք, Աւտրն., *Էական*, Բրգ. *Խնդր.,*  
*Կեցո, Աղթ. Քում ամենապօր:* Ժմտ.  
*Երեւի Տէրդ պսօր:* ԵՂ. շրկ. գձ. *Այսօր*  
*որ Էնն:* Յմբ. դկ. ստղ. *Լերինք ամե-  
նայն* (յատեանն): *Կեցո, Աղթ. Թագ.*  
*խաղաղութեան:*
- 22 **ԴՂ. ԳԿ. Պահք:** Օրհ. Ապշ. գկ. *Քրիս-* 2  
*տոս Աստուած:* Յրգ. Ապշ. ալ. Դ. *Օրհ-*  
*նեայ եւ փառաւորեայ:* Մնկ. գկ. *Օրհ-*  
*նեցէք զՏէր:* Ժմտ. *Որ ըստ ամենայն:*  
ԵՂ. շրկ. դկ. *Փառաբանութիւն:* Յմբ.  
գկ. *Տուր մեզ Տէր եւ Հովանի:*
- 23 **ԵՂ. ԴԶ.** Սրբոյն Եսայեայ մարգա- 3  
րէին: Օրհ. ալ. *Որ պատուածային:*

Յրգ. աձ. *Որ յերկնային:* Մեծ. աձ.  
*Չքեպ երեւեայ:* Մնկ. եւ Յմբ. դձ. *Որ*  
*պատաշագոյն:* Ժմտ. *Տէր որ հիմնե-*  
*ցուցեր:* ԵՂ. շրկ. աձ. *Ճառագայթ:*

- 24 **Ուր. ԴԿ. Պահք:** Օրհ. Ապշ. դկ. *Քրիս-* 4  
*տոս Աստուած:* Յրգ. Յնգ. բկ. *Արարիչ:*  
Մնկ. *Խաչի դկ. Խաչի քո Քրիստոս:*  
Ժմտ. *Որ ըստ ամենայն:* ԵՂ. շրկ. դկ.  
*Որ անսկիւրն:* Յմբ. դկ. *Մոցեն:* **Նա-**  
**խատօնակ:** Ծրկ. *Երանելի սուրբ ա-*  
*ռաքեալք, իւր սարօքն: Ս. Ճգնաւո-*  
*րօքն:* Աղթ. *Որ ընտրեցեր:*
- 25 **† Ծբ. ԱԶ. Սրբոցն Թաղէնսի առաքե-** 5  
**լոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին:** Օրհ.  
գձ. *Երանելի սուրբ առաքեալք, իւր*  
սարօքն: Թագ. յաւիտ. *Այսօր դասք:*  
Մեծ. աձ. *Որ զԲանն Աստուած:* Մնկ.  
դկ. *Քել պարծի:* Բրգ. Ս. *Ճգնաւորօքն,*  
Աղթ. *Որ ընտրեցեր:* Ժմտ. *Առաքեալք:*  
ԵՂ. շրկ. ալ. *Որ սիրողդ էք:* ԺՂ. ընթ. (Իմս.  
1.1-7: Եր. 16.16-21: Ա Կր. 12.28-13.10: Դկ. 9.1-  
6): Յմբ. աձ. *Սուրբ եւ Տէր եւ Ի քէն հայ-*  
*ցեմք:*
- 26 **† Կիր. ԱԿ. Բ կիր. Չկնի Վարդավա-** 6  
**ռի:** Օրհ. ալ. *Երգեցէք Տեսնն:* Յրգ.  
բձ. *Որ ի յերկնից:* Մեծ. բձ. *Չքեպ կոյս:*

Ժմտ. *Միածին Որդի*: Ճշ. շրկ. ակ. *Թագաորենաց Աստուած*: Ճշ. ընթ. (Ես. 3.16-4.1: Ա Կր. 1.25-30: Մտ. 18.10-14): Յմբ. ակ. *Առաքեցար ի Յօրէ*:

- 27 **Բշ. ԲՁ.** Սրբոցն Կիպրիանոսի եպիսկոպոսին եւ քառասուն եւ հինգ վկայիցն, եւ սրբոց կուսանացն Յուստինեայ, Եւփիմեայ եւ Քրիստինեայ: Օրհ. Մրտ. բձ. *Օրհնենս պէս*: Յրց. բկ. *Օրհնենս պէս*: Մնկ. եւ Յմբ. դկ. *Յիշատակ Քրիստոսի*: Ժմտ. *Հարսնացեալք*: Ճշ. շրկ. բձ. *Ուրախանան*:

○ Առաջին քառորդ Լուսնի:

- 28 **Գշ. ԲԿ.** Սրբոցն Աթանագինեայ եպիսկոպոսին եւ տասն աշակերտացն եւ հինգ վկայիցն: Օրհ. Մրտ. բկ. *Շնորհեա մեկ*: Յրց. բկ. *Որք ի մարտի*: Մնկ. բկ. *Ի փառս*: Ժմտ. *Չհայրապետականն*: Ճշ. շրկ. գձ. *Չառաջնորդս*: Յմբ. բկ. *Հրաշափառ ճգնութեամբ*:

- 29 **Դշ. ԳՁ.** Պահք: Օրհ. Ապշ. գձ. *Չերծո քիս*: Յրց. ակ. *Փառաւորեալ*: Մնկ. գձ. *Չքեկ բարեբանեն*: Ժմտ. *Որ ըստ ամենայն*: Ճշ. շրկ. դկ. *Փառաբանու-*

*թիւն*: Յմբ. գձ. *Չօրհնեղալթիւս եւ Պահապան*:

- 30 **Եշ. ԳԿ.** Սրբոց նախահարցն՝ Աղամայ, Աբելի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ, Յովսեփայ, Մովսիսի, Ահարօնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեղէօնի եւ այլոց սրբոց նախահարցն: Օրհ. ակ. *Որ վԱստուածային*: Յրց. դկ. *Առ քեկ Աստուած*: Մեծ. դկ. *Նահապետացն*: Ողորմեա եւ *վՏէր յերկնից՝ վՄարգարէիցն ասա, Ողոր.* դձ. *Որ ատեաւոր*: *Տէր յերկնից* դձ. *Այսօր ժողովորդք*: Մնկ. եւ Յմբ. դկ. *Այսօր ցնծայ զուարճացեալ*: Ժմտ. *Տէր որ հիմնեցուցեր*: Ճշ. շրկ. աձ. *Ճառագայթ*:

- 31 **Ուր. ԴՁ.** Պահք: Օրհ. Ապշ. դձ. *Համբառնամ*: Յրց. Յնգ. աձ. *Օրհնեալ ես*: Մնկ. *Խաչի* դձ. *Գաւապան*: Ժմտ. *Որ ըստ ամենայն*: Ճշ. շրկ. դկ. *Որ անսկիւրն*: Յմբ. դձ. *Չքեկ կարդամք*:



# ՕԳՈՍՏՈՍ

31 ՕՐ



ԱՌԻԷՆ

- 1 **ՇՐ. ԴԿ.** Սրբոց որդւոց եւ թոռանց 12  
Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝  
Արիստակիսի, Վրթանիսի, Յուս-  
կանն, Գրիգորիսի եւ Դանիէլի: Օրհ.  
դկ. *Արմատ ճշմարիտ* (տէս բժ. *Ով եր-*  
*ջանիկ*) (յատեանն): Յրց. ակ. *Որ վոյս*  
*աստուածային*, իւր սարօքն: Մնկ. դկ.  
*Աստուածային հաւատոյ*: Ժմտ. *Չհայ-*  
*րասպետականն*: Եշ. շրկ. գկ. *Հովի*  
*քաջ*: Ճշ. ընթ. (Եր. 17.7-8: Ես. 61.3-7: Բ Տմ.  
1.6-14: Դկ. 11.29-32): Յմբ. ամ. *Սուրբ եւ*  
*Տէր եւ Երկնաթաղաքացին*:
- 2 **† Կիր. ԱԶ. Գ կիր. Զկնի Վարդա-** 13  
**վառի:** Օրհ. ամ. *Երգեսցուք*: Յրց. բկ.  
*Որ յերկնային*: Ժմտ. *Միածին Որդի*:  
Եշ. շրկ. ամ. *Չթազաւորն փառաց*: Ճշ.  
ընթ. (Ես. 5.1-10: Ա Կր. 6.18-7.11: Ստ. 19.3-12):  
Յմբ. ամ. *Փառք յարութեան*:

Օ

ՕԳՈՍՏՈՍ

119

Լ

- 3 **Բշ. ԱԿ.** Սրբոց Մակաբայեցւոցն՝ Ե- 14  
ղիազարու քահանային, Շամունեայ  
եւ Եօթն որդւոց նորին: Օրհ. ակ. *Յա-*  
*մենայն ժամ*: Յրց. Մրտ. գժ. *Որք վտան-*  
*ջանա*: Մնկ. ակ. *Ճգնաւորք*: Ժմտ. *Ի*  
*տաճարի*: Եշ. շրկ. ակ. *Ի տաճարի*:  
Յմբ. ակ. *Պարծանք հաւատոյ*:  
☺ **Լրումն Լուսնի:**
- 4 **Գշ. ԲԶ.** Սրբոց երկոտասան մարգա- 15  
րէիցն՝ Ովսեայ, Ամովսայ, Միքիայ,  
Յովելայ, Աբդիու, Նաւումայ, Ամ-  
բակումայ, Յովնանու, Սոփոնեայ,  
Անգեայ, Չաբարեայ եւ Մաղաբեայ:  
Օրհ. ակ. *Որ վԱստուածային*: Յրց.  
դժ. *Որ ընդ հողեղէն*: Մեծ. դժ. *Որ ի*  
*բարձրութիւնա*: Մնկ. եւ Յմբ. դկ. *Այսօր*  
*ցնծայ զուարճացեալ*: Ժմտ. *Տէր որ*  
*հիմնեցուցեր*: Եշ. շրկ. ամ. *Ճառագայթ*:  
5 **Դշ. ԲԿ. Պահք:** Օրհ. Ապշ. բկ. *Յամե-* 16  
*նայն ժամ*: Յրց. ակ. *Չանճառ Էութիւն*:  
Մնկ. բկ. *Ի փառա*: Ժմտ. *Որ ըստ ամե-*  
*նայն*: Եշ. շրկ. դկ. *Փառաբանութիւն*:  
Յմբ. բկ. *Յօգնութիւն*:
- 6 **Եշ. ԳԶ.** Սրբոցն Սոփիայ եւ երից 17  
դստերացն՝ Պիստոսի, Էլպիսի եւ  
Ագապի: Օրհ. գժ. *Չարիական մահ*:

|   |     |         |   |
|---|-----|---------|---|
| Օ | 120 | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|-----|---------|---|

Հրց. դձ. Յուսացեալքն: Մնկ. գձ. Այսօր յիշատակ: Ժմտ. Ի տաճարի: Ճշ. շրկ. գձ. Պայծառացիր: Հմբ. գձ. Չպսակիչն արբոց:

7 Ուր. ԳԿ. Պաիք: Օրհ. Ապշ. գկ. Զրիստոս Աստուած: Հրց. Հնգ. ալ. Գոհաբանենք: Մնկ. Խաչի գկ. Ով պահապան: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ. դկ. Որ անսկիպն: Հմբ. գկ. Տուր մեզ եւ Հովանի:

8 Ծբ. ԴԶ. Եփեսոսի Ս. Ժողովոյն երկերիւր հայրապետացն (431 թ.): Օրհ. գձ. Այսօր արբոց հայրապետացն, իւր սարօքն: Մնկ. գձ. Ով հրաշալի եւ Ի Սուրբ Երրորդութենէն (տես հրահանգ ի 22-ն փետրուարի): Ժմտ. Չհայրապետականն: Ճշ. շրկ. դձ. Այսօր երկնայնոցն: Ճշ. ընթ. (Եգկ. 3.16-19: Բ Տմ. 1.6-14: Դկ. 10.16-20): Հմբ. ամ. Սուրբ եւ Տէր եւ Երկնաբաղաբացին:

9 † Կիր. ԴԿ. Դ կիր. Չկնի Վարդավառի: Օրհ. դկ. Յաղթական: Հրց. գձ. Փառաւորենք: Ժմտ. Միածին Որդի: Ճշ. շրկ. դկ. Որ անբաւելի: Ճշ. ընթ. (Ես. 7.1-9: Ա Կր. 13.11-14.5: Մր. 2.1-12): Հմբ. դկ. Յորժամ եկին եւ Էջ հրեշտակն:

|   |         |     |   |
|---|---------|-----|---|
| Օ | ՕԳՈՍՏՈՍ | 121 | Լ |
|---|---------|-----|---|

## Բարեկենդան

### Ս. Աստուածածնի պահոց:

10 Բշ. ԱԶ. Ա օր Աստուածածնի պահոց: 21 Օրհ. Ապշ. ամ. Հայր բապտիզմորմ: Հրց. բձ. Ա. Օրհնեալ Տէր Աստուած: Մնկ. ամ. Չառաւօտու: Ժմտ. Որ ի Հօրէ: Ճշ. շրկ. գձ. Զրիստոս Աստուած: Հմբ. ամ. Ինձ օգնութիւն եւ Համբարձի:

11 Գշ. ԱԿ. Բ օր Աստուածածնի պահոց: 22 Օրհ. Ապշ. ալ. Ծով կենցաղոյս: Հրց. Ապշ. Աղցմի. բձ. Բ. Որ սպրեցուցեր: Մնկ. ալ. Լոյս փառաց: Ժմտ. Որ ի Հօրէ: Ճշ. շրկ. գձ. Զրիստոս Աստուած: Հմբ. ալ. Օգնական:

### Օ Վերջին բառորդ Լուսնի:

12 Դշ. ԲԶ. Գ օր Աստուածածնի պահոց: 23 Օրհ. Ապշ. բձ. Դարձո պատումն: Հրց. Ապշ. Աղցմի. բձ. Գ. Որ ահաւոր: Մնկ. բձ. Մանկունք: Ժմտ. Որ ըստ ամենայն: Ճշ. շրկ. դկ. Փառաբանութիւն: Հմբ. բձ. Համբարանալով:

13 Եշ. ԲԿ. Դ օր Աստուածածնի պահոց: 24 Օրհ. Ապշ. բկ. Յամենայն ժամ: Հրց. Ապշ. բձ. Դ. Ողիղ են: Մնկ. բկ. Արթունք: Ժմտ. Որ ի Հօրէ: Ճշ. շրկ.

|   |     |         |   |
|---|-----|---------|---|
| Օ | 122 | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|-----|---------|---|

զձ. *Քրիստոս Աստուած*: Յմբ. բկ. *Յօզ-նութիւն*:

- 14 Ուր. ԳԶ. Ե օր Աստուածածնի պա- 25  
հոց: Օրհ. Ապշ. զձ. *Չերծո՞ւ քիս*: Յրգ. Յնգ. բձ. *Որ թագաւորդ ես*: Մնկ. *Խաչի* զձ. *Փայտ կենաց*: Ժմտ. *Որ ըստ ամե-նայն*: Եշ. շրկ. բկ. *Որ յանէից*:

Յերեկոյին՝ յասելն *վՍուրբ Աստուածն*, որ *խաչեցար*՝ պարտ է ելա-նել յատեանն շուրջառաւ եւ կատա-րել **Նախատօնակ**, ասելով Յմբ. զձ. *Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի* (առանց հարցի): Քրգ. *Խնդր.*, *Կեցո*, Աղթ. *Թագ. խաղաղութեան*:

(*Հրամանաւ. Տ. Տ. Մկրտչի Ա Կաթողիկոսի Ամենայն Հայոց*):

Այսօր յերեկոյին Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսն Ազգիս եկեղեցական մեծաշուք հանդիսիւ իջանէ

ի Մայր Տաճարն Ս. Էջմիածնի:

- 15 Ծբ. ԳԿ. Տօն Շողակաթի Ս. Էջմիած- 26  
նի՝ ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին: Չկնի *Ճանապարհ մո-լորելոցին* երգ՝ *Շինող Էիցս*: Օրհ. զձ.

|   |  |         |     |   |
|---|--|---------|-----|---|
| Օ |  | ՕԳՈՍՏՈՍ | 123 | Լ |
|---|--|---------|-----|---|

*Ուրախ լեր*, իւր սարօքն (յատեանն): Մեծ. դձ. *Ուրախացիր Աստուածա-ծին*: Քրգ. *Ասացուք Ս. Աստուած՝ որ խաչեցար*: Մնկ. դկ. *Էջ Միածինն ի Հօրէ*: Չկնի *Մանկանցն* Քրգ. Ս. *Եկե-ղեցեալս, Կեցո*, Աղթ. *Առ դրան սուրբ տաճարիս*: Ժմտ. *Տէր մեր եւ Փրկիչ*: Եշ. շրկ. դձ. *Որ հաստատեցեր*: Եշ. ընթ. (Առ. 3.19-26: Եզկ. 40.3-10: Ա Պտ. 2.1-10: Ստ. 16.13-19): Սրբ. *Հրեշտակային*:

Յերեկոյին՝ *Լոյս զուարթ*: Քրգ. *Ասացուք Ս. Աստուած՝ որ խաչեցար*: Եւ զգեցցին միաբանքն եւ եկեցցեն յատեանն: Յմբ. դձ. *Այսօր ժողովեալ սրբոցն* (գերկուսն ի միասին ասա): Չկնի *Հայր գթածին՝ Նախատօնակ*: Շրկ. դձ. *Որ ցնախամօրն*, իւր սարօքն: Քրգ. Ս. *վԱստ.*, *Կեցո*, Աղթ. *Ընկալ Տէր*:

**Նաւակատիբ**:

- 16 † Կիր. ԴԶ. ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՍՈՒՐԲ 27  
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ: Ի գիշերին հսկումն է եւ դիցեն *վՍրբութիւնն* ի վերայ բազմոցի *Սեղանոյն*: Չկնի *Ժողովեալքսին* երգ՝ *Աստուածածին անարատ*: Օրհ. դձ. *Այսօր ժողովեալ*, իւր սարօքն (յատեանն): Քրգ. *Մայր Սուրբ*: Ս. *Աս-*

տուած՝ որ եկիր ի փոխումն Մօր քո եւ Կուսի: Թափօր: Շրկ. դժ. Այսօր ժողովեալ: Գիրք. Աւետարան, **Անդաստան**, Քրդ. Ս. Խաչիւս, Աղթ. Պահպանիչ: Շրկ. դկ. Յիսուս Միածին: Աւետարան, Յոգւոց, Աղթ. Ըրիստոս Որդի: Նորաստեղծեալ, Քրդ. Խնդր., Կեցո, Աղթ. Բուն ամենապօր եւ հրաշալի Գալստեանդ: Ժմտ. Աստուածածին անհարսնացեալ: Եձ. շրկ. բժ. Անթառամ ծաղիկ: Ճձ. ընթ. (Երգ. 4.9-15: Ես. 7.10-16: Գղ. 3.29-4.7: Ղկ. 2.1-7): Սրբ. Բապնութիւնք:

**Չկնի Սրբոյ Պատարագի կատարի օրհնութիւն խաղողոյ (տէն ի ճաշոցի):**

Յերեկոյին՝ Գիրք, Աւետարան: Շրկ. դժ. Այսօր ժողովեալ: Աւետարան, **Անդաստան**, Քրդ. Ս. Խաչիւս, Աղթ. Պահպանիչ: Ապա Խոնարհեցո եւ Ապրեցո, Քրդ. Մայր Սուրբ: Յմբ. դկ. Այսօր պանճառելի (գերկուսն ի միասին ասա): Չկնի Հայր գթածին ելցեն յատեանն: **Նախատօնակ:** Շրկ. դկ. Որ ՎՄիածնի Որդւոյ քո, իւր սարօքն: Քրդ. Ս. ՎԱտ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:

**Միջոց ուտիքն երեք շաբաթ Է:**

**17 † ԲՁ. ԴԿ. Բ օր Վերափոխման:** Օրհ. 28 դկ. Այսօր պանճառելի (վԱրեւելքն զհետն ասա): Յրգ. դկ. Որ ՎՄիածնի, իւր սարօքն: Քրդ. Մայր Սուրբ: Աւտրն., Արարչական, Քրդ. Խնդր., Կեցո, Աղթ. Բուն ամենապօր: Ժմտ. Աստուածածին պեղ: Եձ. շրկ. դկ. Աստուածածին ամպ լուսաւոր: Ճձ. ընթ. (Առ. 11.30-12.4: Ջք. 2.10-13: Բ Կր. 6.16-7.1: Ղկ. 1.39-56): Սրբ. Վասն յիշատակի:

**Չկնի Սրբոյ Պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց:**

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ**

Յերեկոյին՝ Քրդ. Մայր Սուրբ: Յմբ. դժ. Այսօր հրաշափառ: Չկնի Հայր գթածին՝ **Նախատօնակ:** Շրկ. դժ. Որ պղատակնիք, իւր սարօքն: Քրդ. Ս. ՎԱտ., Կեցո, Ընկալ Տէր:

**18 ԳՁ. ԱԶ. Գ օր Վերափոխման:** Օրհ. 29 դժ. Այսօր հրաշափառ, իւր սարօքն: Քրդ. Մայր սուրբ: Աւտրն., Էական, Կեցո, Աղթ. Բուն ամենապօր: Ժմտ. Աղաչեմք պեղ: Եձ. շրկ. դժ. Աստուածածին գերագոյն:

Յերեկոյին՝ Քրգ. Մայր Սուրբ: Յմբ. դձ. Այսօր ժողովեալ: Չկնի Հայր գթածին՝ Նախատօնակ: Շրկ. դձ. Որ վնասխամօրն, իւր սարօքն: Քրգ.Ս. յԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:

**Այսպէս կրկնեա երիցս գերիս պատկերս, որ լինի ինն օր:**

19 Դձ. ԱԿ. Դ օր Վերափոխման: Օրի. 30  
դձ. Այսօր ժողովեալ, իւր սարօքն: Ժմտ. Աստուածածին անհարսնացեալ: Եձ. շրկ. բձ. Անթառամ ծաղիկ: Յմբ. դկ. Այսօր զանճառելի: Չկնի Հայր գթածին՝ Նախատօնակ: Շրկ. դկ. Որ յՄիածին, իւր սարօքն: Կեցո:

● Ծնունդ Լուսնի:

20 Եձ. ԲԶ. Ե օր Վերափոխման: Օրի. 1  
դկ. Այսօր զանճառելի, իւր սարօքն (յԱրեւելքն չիետն ասա): Ժմտ. Աստուածածին զքեզ: Եձ. շրկ. դկ. Աստուածածին ամպ: Յմբ. դձ. Այսօր հրաշափառ: Նախատօնակ: Շրկ. դձ. Որ զդատակնիք, իւր սարօքն: Կեցո:

21 Ուր. ԲԿ. 2 օր Վերափոխման: Օրի. 2  
դձ. Այսօր հրաշափառ, իւր սարօքն: Ժմտ. Աղաչենք զքեզ: Եձ. շրկ. դձ. Աստուածածին զերազոյն: Յմբ. դձ. Այսօր ժողովեալ, իւր սարօքն: Կեցո:

տուածածին զերազոյն: Յմբ. դձ. Այսօր ժողովեալ: Նախատօնակ: Շրկ. դձ. Որ վնասխամօրն, իւր սարօքն: Կեցո:

22 Զբ. ԳԶ. Է օր Վերափոխման: Օրի. դձ. 3  
Այսօր ժողովեալ, իւր սարօքն: Ժմտ. Աստուածածին անհարսնացեալ: Եձ. շրկ. բձ. Անթառամ ծաղիկ: Եձ. ընթ. (Երգ. 4.9-15: 8.14: Ես. 7.10-16: Գղ. 3.29-4.7: Դկ. 2.1-7):

Յերեկոյին՝ Լոյս զուարթ: Յմբ. դկ. Այսօր զանճառելի: Նախատօնակ: Շրկ. դկ. Որ յՄիածին, իւր սարօքն: Կեցո:

23 † Կիր. ԳԿ. Բ կիր. Չկնի Վերափոխման: Օրի. դկ. 4  
Այսօր զանճառելի, իւր սարօքն (յԱրեւելքն զիետն ասա): Ժմտ. Աստուածածին զքեզ: Եձ. շրկ. դկ. Աստուածածին ամպ: Եձ. ընթ. (Առ. 11.30-12.4: Զբ. 2.10-13: Բ Կր. 6.16-7.1: Դկ. 1.39-56): Յմբ. դձ. Այսօր հրաշափառ: Նախատօնակ: Շրկ. դձ. Որ զդատակնիք, իւր սարօքն: Կեցո:

24 Բձ. ԴԶ. Թ օր Վերափոխման: Օրի. 5  
դձ. Այսօր հրաշափառ, իւր սարօքն: Ժմտ. Աղաչենք զքեզ: Եձ. շրկ. դձ. Աստուածածին զերազոյն: Յմբ. դձ. Ուրախ լեր Մայր անճառ: Քրգ. Ս. յԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:



|   |     |         |   |
|---|-----|---------|---|
| 0 | 128 | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|-----|---------|---|

25 **ԳԶ. ԴԿ.** Սրբոցն Յովակիմայ եւ Ան- 6  
նայի՝ ծնողաց Ս. Աստուածածնի եւ  
Կանանցն Իղաբերից: Օրհ. ակ. *Որ*  
*նախիմաց*, իւր սարօքն: Մնկ. ակ.  
*Աշակերտք Քրիստոսի*: Քրգ. Ս. *ճգնա-*  
*ւորօքն*: Աղթ. *Որ ընտրեցեր*: Ժմտ.  
*Առաքեալք*: Եշ. շրկ. դձ. *Որ ի բարձ-*  
*րութիւնս*: Յմբ. դկ. *Իղաբերից*:

26 **ԴԶ. ԱԶ. Պահք:** Օրհ. Ապշ. ամ. *Հայր* 7  
*բապունողորմ*: Հրց. բկ *Աղցմի. Ա.*  
*Հարցն մերոց*: Մնկ. ամ. *Հառաւօտու*:  
Ժմտ. *Որ ըստ ամենայն*: Եշ. շրկ. դկ.  
*Փառարանութիւն*: Յմբ. ամ. *Ինձ օգ-*  
*նութիւն եւ Համբարձի*:

○ Առաջին բառորդ Լուսնի:

27 **ԵԶ. ԱԿ.** Սրբոյն Երեմիայի մարգա- 8  
րէին: Օրհ. ակ. *Որ պատուածային*:  
Հրց. ամ. *Որ յերկնային*, իւր սարօքն:  
Մեծ. ամ. *Չքեպ երեւեալ*: Մնկ. եւ Յմբ.  
դձ. *Որ պատաշագոյն*: Ժմտ. *Տէր որ*  
*հիմնեցուցեր*: Եշ. շրկ. ամ. *Ճառագայթ*:

28 **Ուր. ԲԶ. Պահք:** Օրհ. Ապշ. բձ. *Դարձո* 9  
*պցատումն*: Հրց. Հնգ. գձ. *Օրհնեմք*:  
Մնկ. *Խաչի բձ. Ապախնեցաք*: Ժմտ.  
*Որ ըստ ամենայն*: Եշ. շրկ. դկ. *Որ*  
*անակիպն*: Յմբ. բձ. *Համբարանալով*:

|   |         |     |   |
|---|---------|-----|---|
| 0 | ՕԳՈՍՏՈՍ | 129 | Լ |
|---|---------|-----|---|

29 **ՇԲ. ԲԿ.** Սրբոց առաքելոցն Թովմա- 10  
յի, Յակոբայ եւ Շմաւոնի: Օրհ. գձ.  
*Երանելի տուրք առաքեալք*, իւր սա-  
րօքն: Մնկ. ակ. *Աշակերտք Քրիստոսի*:  
Ժմտ. *Առաքեալք եւ վկայք*: Եշ. շրկ.  
ակ. *Որ սիրողդ էք*: Ճշ. ընթ. (Իմս. 9.13-10.3:  
Սբ. 7.18-20: Ա Կր. 12.28-13.3: Յհ. 20.24-31):

Յերեկոյին՝ *Լոյս զուարթ*: Ս. *Աս-*  
*տուած՝ որ յարեար*: Յմբ. ամ. *Սուրբ*  
*ես Տէր եւ Ի քէն հայցեմք*: Չկնի *Հայր*  
*գթածին՝ Նախատօնակ*: Շրկ. ակ.  
*Որ նախիմաց*, իւր սարօքն: Քրգ. Ս.  
*վնատ.*, *Կեցո*, Աղթ. *Ընկալ Տէր*:

30 † **Կիր. ԳԶ. Գ կիր.** Չկնի Վերա- 11  
փոխման: Տօն գիւտի գօտույ Սր-  
բուհույ Աստուածածնի: Չկնի *Ռահ*  
*գործեալին երգ՝ Չայնիւ առ քեպ*: Օրհ.  
գկ. *Երգեցէք որդիք*, իւր սարօքն: Ալե-  
լուք *Ծննդեան*: Քրգ. *Մայր Սուրբ*:  
Աւտրն., *Նորաստեղծեալ*, Քրգ. *Խնդր.*,  
*Կեցո*, Աղթ. *Քում ամենապօր*: Ժմտ.  
*Միածին Որդի* (ճաշու ամենայն ինչ Յա-  
րութեան է): Եշ. շրկ. գձ. *Չթազաւորն*  
*Քրիստոս*: Ճշ. ընթ. (Ես. 9.8-19: Բ Կր. 1.1-11:  
Սր. 4.35-40):

Յերեկոյին՝ Քրգ. Մայր Սուրբ: Յմբ.  
դձ. Նոր Սիոն՝ ծննալ: Քրգ. Ս. զԱստ.,  
Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:

- 31 ԲՂ. ԳԿ. Սրբոյն Ստեփաննոսի Ու- 12  
նեցւոյն եւ սրբոց վկայիցն Գոհարի-  
նեայ, Ծամիղէի, Տուքիկոսի եւ Ռա-  
տիկոսի: Օրհ. գկ. Այսօր հրէշտակաց:  
Յրց. Մրտ. դձ. Բ. Սուրբ եւ Տէր: Մնկ.  
դձ. Յնծայ այսօր: Ժմտ. Ի տաճարի:  
ԵՂ. շրկ. գկ. Ճգնաւորք: Յմբ. դկ. Մար-  
տիրոս եւ վկայ:



## ՍԵՊՏԵՄԲԵՐ

30 ՕՐ



ԿՈՅՄԼ

- 1 ԳՂ. ԴՁ. Սրբոց մարգարէիցն Եզե- 13  
կիէլի, Եզրի եւ Չաբարիայի՝ հօրն  
Յովհաննու Մկրտչի: Օրհ. ալ. Որ  
զատուածային, իւր սարօքն: Մեծ.  
դձ. Անարատ կոյս: Մնկ. եւ Յմբ. դձ. Որ  
զյառաջագոյն: Ժմտ. Տէր որ հիմնե-  
ցուցեր: ԵՂ. շրկ. ած. Ճառագայթ:
- 2 ԴՂ. ԴԿ. Պահք: Օրհ. Ապշ. դկ. Քրիս- 14  
տոս Աստուած: Յրց. Ապշ. բկ. Բ. Որ  
հարցն մերոց: Մնկ. դկ. Է անուն:  
Ժմտ. Որ ըստ ամենայն: ԵՂ. շրկ. դկ.  
Փառաբանութիւն: Յմբ. դկ. Մոցեն:
- ☺ Լրումն Լուսնի:
- 3 ԵՂ. ԱՁ. Սրբոցն Յովհաննու Կարա- 15  
պետին եւ Յոբայ արդարոյն: Օրհ. գձ.  
Չմարգարէ բարձրելոյն, իւր սարօքն:

|   |     |           |   |
|---|-----|-----------|---|
| Օ | 132 | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|-----|-----------|---|

Մնկ. եւ Յմբ. դկ. *Մարգարէից գերագոյն:* Ժմտ. *Տէր որ հիմնեցուցեր:* Եշ. շրկ. ած. *Ճառագայթ:*

- 4 **Ուր. ԱԿ. Պահբ:** Օրհ. Ապշ. ակ. *Ծով* 16  
*կենցաղոյս:* Յրց. Յնգ. գկ. *Բանդ Աստուած:* Մնկ. *Խաչի* ակ. *Սեղան քո Տէր:* Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Որ անակիւրն:* Յմբ. ակ. *Օգնական:*

- 5 **Շբ. ԲՁ. Նիկիոյ Սուրբ Ժողովոյն ե-** 17  
**րեք հարիւր եւ ութուտասան Յայրապետացն (325 թ.):** Օրհ. զձ. *Այսօր սրբոց հայրապետացն,* իւր սարօքն: Մնկ. զձ. *Ով հրաշայի եւ Ի Սուրբ Երրորդութենէն* (տես հրահանգ ի 22-ն փետրուարի): Ժմտ. *Չհայրապետականն:* Եշ. շրկ. դձ. *Այսօր երկնայնոցն:* Ճշ. ընթ. (Եզկ. 44.23-24: Եբր. 12.1-7: Յհ. 14.25-31): Յմբ. ած. *Սուրբ եւ Տէր եւ Երկնաւառադաբացին:*

- 6 **† Կիր. ԲԿ. Դ կիր. Չկնի Վերափոխման:** Օրհ. բկ. *Փարաւօն:* Յրց. գկ. *Անճառելի:* Ժմտ. *Միածին Որդի:* Եշ. շրկ. բկ. *Օրհնութիւն ի բարձունս:* Ճշ. ընթ. (Ես. 13.1-11: Բ Կր. 7.4-16: Մր. 7.31-37): Յմբ. բկ. *Քրիստոս յարեաւ:*

**Բարեկենդան Ս. Խաչի պահոց:**

|   |  |           |     |   |
|---|--|-----------|-----|---|
| Օ |  | ՍԵՊՏԵՄԲԵՐ | 133 | Լ |
|---|--|-----------|-----|---|

- 7 **Բշ. ԳՁ. Ա օր Ս. Խաչի պահոց:** Օրհ. 19  
*Ապշ. զձ. Չերծոն փս:* Յրց. Ապշ. բկ. Գ. *Մանկունքն գերեալք:* Մնկ. զձ. *Չքեպ բարեբանեն:* Ժմտ. *Որ ի Յօրէ:* Եշ. շրկ. զձ. *Քրիստոս Աստուած:* Յմբ. զձ. *Չօրհնէրգութիւնս եւ Պահապան:* **Նախատօնակ:** Երկ. ակ. *Որ նախիմաց,* իւր սարօքն: Բրգ. *Ս. յԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:*

- 8 **† Գշ. ԳԿ. Բ օր Խաչի պահոց:** Տօն 20  
**Ճննդեան Սրբուհոյ Կուսին Մարիամու յԱննայէ:** Չկնի *Ճանապարհ մոլորելոցին* երգ՝ *Չայնի առ քեպ:* Օրհ. գկ. *Երգեցէր որդիք Սիովնի,* իւր սարօքն: Բրգ. *Մայր Սուրբ: Ս. Աստուած՝ որ խաչեցար:* Գիրք, Աւետ., *Էական:* Բրգ. *Խնդր., Կեցո, Աղթ. Քում ամենապօր:* Ժմտ. *Աղաչեմք զքեպ:* Եշ. շրկ. գկ. *Ծառ կենաց:* Չաւուր գիրքն եւ *յԱւետարանն* կարդա: Ճշ. ընթ. (Առ. 31.29-31: Ես. 61.9: Գղ. 3.24-29: Մտ. 1.1-17): Սրբ. *Բապմութիւնք:*

- Յերեկոյին՝ Մեսոյ. Մեծացուցէ:* Բրգ. *Մայր Սուրբ:* Յմբ. դձ. *Նոր Սիոն:* Բրգ. *Ս. յԱստ., Կեցո, Աղթ. Ընկալ Տէր:*  
9 **Դշ. ԴՁ. Գ օր Ս. Խաչի պահոց:** Օրհ. 21  
*Ապշ. դձ. Յամբարնամ:* Յրց. Ապշ.

Աղցմի. բկ. Դ. *Տեր Աստուած հարցն:*  
Մնկ. դձ. *Մանկունք չՏեր:* Ժմտ. *Որ*  
*ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Փառաբա-*  
*նութիւն:* Զմբ. դձ. *Զբեպ կարդամբ:*

- 10 Եշ. ԴԿ. Դ օր Ս. **Խաչի պահոց:** 22  
Օրհ. Ապշ. դկ. *Քրիստոս Աստուած:*  
Հրց. Ապշ. *Աղցմի. բկ. Ե. Մանկանցն*  
*չձայնն:* Մնկ. դկ. *Է անուն:* Ժմտ. *Որ*  
*ըստ ամենայն:* Եշ. շրկ. գձ. *Քրիստոս*  
*Աստուած:* Զմբ. դկ. *Մոցեն:*

**Օ Վերջին բառորդ Լուսնի:**

- 11 Ուր. ԱԶ. Ե օր Ս. **Խաչի պահոց:** Օրհ. 23  
Ապշ. աձ. *Հայր բապունողորմ:* Հրց.  
Հնգ. դձ. *Որ փառօք Հօր:* Մնկ. *Խաչի*  
աձ. *Հրաշակերտ:* Ժմտ. *Որ ըստ ամե-*  
*նայն:* Եշ. շրկ. բկ. *Որ յանձնի:* Զմբ. աձ.  
*Ինձ օգնութիւն եւ Համբարձի:*

- 12 Շբ. ԱԿ. Տօն Սրբոյ Եկեղեցւոյ ի նա- 24  
ւակատիս Սրբոյ Խաչին: Օրհ. բկ. *Ի*  
*վերայ վիմի հաւատոյ,* իւր սարօքն:  
Մեծ. աձ. *Մեծացուցանեմբ:* Քրգ. Ա-  
սասցուր: Ս. *Աստուած՝ որ խաչեցար:*  
Մնկ. եւ Եշ. շրկ. ակ. *Սեղան քո Տեր:*  
*Զկնի Մանկանցն* Քրգ. Ս. *Եկեղե-*  
*ցեաւս, Կեցո, Աղթ. Առ դրան սուրբ*  
*տանարիս:* Ժմտ. *Զխաղաղութիւն:* Ճշ.

ընթ. (Առ. 3.9-17: Ես. 66.12-16: Ա Տմ. 3.14-16:  
Յհ. 10.22-42): Սրբ. *Հրեշտակային:*

Յերեկոյին՝ *Լոյս չուարթ:* Քրգ. Ա-  
սասցուր: Ս. *Աստուած՝ որ խաչեցար:*  
Զմբ. աձ. *Որ զանարատ* (յատեանն):  
Քրգ. Ս. *Խաչիս, Կեցո, Աղթ. Պահ-*  
*պանեա:*

**Նաւակատիք:**

- 13 † Կիր. ԲԶ. **ԽԱԶՎԵՐԱՑ:** Ի գիշերին 25  
հսկումն է եւ դիցեն *վՍրբութիւնն* ի վե-  
րայ բազմոցի *Սեղանոյն:* Ի տեղի *Հան-*  
*գատեան* շարականի՝ *Այսօր անճառ*  
*եւ Տարածեալ:* Աւտր. *Խաչելութեան:*  
*Աղբերացն:* Երգ. *Տրտմահաղորդ:*  
Օրհ. աձ. *Որ զանարատ բապուկս,* իւր  
սարօքն (յատեանն): Քրգ. *Ասասցուր:*  
Ս. *Աստուած՝ որ խաչեցար:* Թափօր:  
Շրկ. աձ. *Որ զանարատ,* Գիրք, Աւե-  
տարան: **Անդաստան:** Քրգ. Ս. *Խա-*  
*չիս, Աղթ. Պահպանիչ:* Ապա *Նորաս-*  
*տեղծեալ:* Քրգ. *Խնդր., Կեցո, Աղթ.*  
*Քում ամենապօր:* Շրկ. բկ. *Խաչի քո*  
*Քրիստոս երկրպագանեմբ. եւ զսուրբ*  
*վԹաղումնդ քո մեծացուցանեմբ. եւ*  
*զսուրբ զՅարութիւնդ քո փառաւո-*  
*րեմբ եւ այլն:* Փառք սուրբ Խաչիդ՝

ալելուիա, Խաչեցելոյդ՝ ալելուիա եւ այլն որպէս ի Չատկին: Քրգ. Ս. Խաչիւս, Աղթ. Պահպանեա: Ժմտ. Առաջի պատուական: Ճշ. շրկ. գկ. Յարթող եւ ւնոր: Ճշ. ընթ. (Ես. 49.13-23: Գղ. 6.14-18: Յհ. 3.13-21): Սրբ. Ով է որպէս:

Յերեկոյին՝ թափօր Խաչվերացի (եթէ եղանակն ներեսցէ՝ ի դուրս կատարեա գթափօրն՝ ըստ Տօնացուցի): Յմբ. դժ. Չօրութիւն Սուրբ Խաչի: Քրգ. Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:

**Ի թափօր մի եւս ելցեն մինչեւ**

**ի Տեառնընդառաջն եւ անտի**

**ի Ծաղկազարդն:**

14 † **ԲՂ. ԲԿ. Տօն է Ս. Խաչի:** Օրհ. դժ. 26  
 Չօրութիւն սուրբ խաչի, իւր սարօքն: Մեծ. դժ. Մայր լուսոյ: Մնկ. Խաչի բկ. Խաչն կենարար: Քրգ. Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա: Ժմտ. Առաջի պատուական: Ճշ. շրկ. դժ. Ի յերկնից: Ճշ. ընթ. (Ես. 65.22-25: Ա Կր. 2.6-10: Յհ. 3.22-36): Սրբ. Վասն յիշատակի:

**Չկնի Սրբոյ Պատարագի**

**կատարի հոգեհանգիստ վասն**

**համօրէն ննջեցելոց:**

**ՅԻՇԱՏԱԿ ՍԵՌԵԼՈՅ**

Յմբ. բկ. Խաչն կենարար: Քրգ. Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:

15 **ԳՂ. ԳՁ. Տօն է Ս. Եկեղեցւոյ:** Օրհ. բկ. 27  
 Խաչն կենարար եւ Որ յարոռ փառաց (Յարութեան) եւ զժ. Սրբութիւն Սրբոց: Յրգ. (Շողակաթին) դժ. Ուրախ լեր այսօր, իւր սարօքն: Մեծ. դժ. Ուրախացիր Աստուածածին վերօրհնելոյ: Քրգ. Ասացուր: Մնկ. դկ. Էջ Միածինն: Չկնի Մանկանցն՝ Քրգ. Ս. Եկեղեցեաւս, Կեցո, Աղթ. Առ դրան սուրբ տաճարիս: Ժմտ. Չխաղաղութիւն: Ճշ. շրկ. դժ. Որ հաւատաւեցեր: Սրբ. Յրեշտակային: Յմբ. զժ. Ուրախ լեր սուրբ Եկեղեցի: Քրգ. Ս. Եկեղեցեաւս, Կեցո, Աղթ. Ի մէջ տաճարիս:

16 **ԴՂ. ԳԿ. Տօն է Ս. Եկեղեցւոյ:** Օրհ. 28  
 զժ. Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի: Յրգ. զժ. Այսօր պայծառ, իւր սարօքն: Քրգ. Ասացուր: Մնկ. զժ. Այսօր ուրախացեալ: Չկնի Մանկանցն՝ Քրգ. Սուրբ եկեղեցեաւս, Կեցո, Աղթ. Առ դրան սուրբ տաճարիս: Ժմտ. Չխաղաղութիւն: Ճշ. շրկ. զժ. Այսօր ուրախացեալ: Յմբ. բկ. Անպատումն: Քրգ. Ս. Եկեղեցեաւս, Կեցո, Աղթ. Ի մէջ տաճարիս:

**17 ԵՂ. ԴԶ. ՏՈՒ Է Ս. ԵԿԵՂԵՍՈՅ:** Օրհ. բկ. 29  
*Անպատումն եւ Որ համագոյր (Յարութեան):* Հրգ. (Տապանակին) զձ. Այսօր *ցնծան, իւր սարօքն: Բրգ. Ասասցուք:* Մնկ. ալ. *Որ ի սկզբանէ:* Բրգ. Ս. *Եկեղեցեաւս, Կեցո, Աղթ. Առ դրան սուրբ տաճարիս: Ժմտ. Չխաղաղութիւն:* ԵՂ. շրկ. դձ. *Այսօր ցնծան:* Հմբ. բձ. *Անպական: Ս. Եկեղեցեաւս, Կեցո, Աղթ. Ի մէջ տաճարիս:*

● **Ծնունդ Լուսնի:**

**18 Ուր. ԴԿ. ՏՈՒ Է Ս. ԽԱՅԻ:** Օրհ. բձ. 1  
*Անապական, իւր սարօքն: Մեծ. դձ. Մայր լուսոյ:* Բրգ. *Ասասցուք:* Մնկ. *Խաչի դկ. Խաչի քո Բրիստոս:* Բրգ. Ս. *Խաչիս, Կեցո, Աղթ. Պահպանեա:* Ժմտ. *Առաջի պատուական:* ԵՂ. շրկ. գկ. *Ով քառաթեւ:* Հմբ. զձ. *Որ ծագեցեր:* Բրգ. Ս. *Խաչիս, Կեցո, Աղթ. Պահպանեա:*

**19 Ծբ. ԱԶ. ՏՈՒ Է Ս. ԽԱՅԻ:** Օրհ. զձ. 2  
*ծագեցեր, իւր սարօքն: Մեծ. դկ. Աստուածածին պայծառ:* Բրգ. *Ասասցուք:* Մնկ. ստղ. դկ. *Պարունակեալ:* Չկնի *Մանկանցն:* Բրգ. Ս. *Խաչիս, Կեցո, Աղթ. Պահպանեա:* Ժմտ. *Առա-*

*ջի պատուական:* ԵՂ. շրկ. դկ. *Սուրբ պիաչ քո:* ԶՂ. ընթ. (Ես. 51.4-11: Ա Տմ. 6.13-16: Յհ. 7.37-52):

Յերեկոյին՝ *Լոյս պուարթ:* Հմբ. գկ. *Այսօր երեսումն (յատեանն):* Բրգ. Ս. *Խաչիս, Կեցո, Աղթ. Պահպանեա:*

**20 † Կիր. ԱԿ. Բ կիր. ՉԿՆԻ Ս. ԽԱՅԻ:** 3  
 Օրհ. ալ. *Երգեցէք:* Հրգ. դձ. *Ա. Որ եկիր կամա Յօր:* Մեծ. դձ. *Աթոռ քրով-բէական:* Ժմտ. *Միածին Որդի:* ԵՂ. շրկ. ալ. *Թագաւորեաց Աստուած:* ԶՂ. ընթ. (Ես. 14.3-17: Բ Կր. 10.18-11.10: Սր. 10.1-12): Հմբ. ալ. *Յարուցեալ Տէրն:* Բրգ. *Խնդր., Կեցո, Աղթ. Թագ. խաղաղութ:*

**Բարեկենդան**

**Վարագայ Սրբոյ Խաչին,  
բայց տօնք լինին:**

**21 ԲՂ. ԲԶ. Պաիք:** Սրբոցն Մամասայ, 4  
**Փիլիկտիմոնի եւ Սիմէօնի Սիւնա-կեցոյն:** Օրհ. Մրտ. բձ. Օրհնեն գբեգ: Հրգ. Մրտ. դկ. *Ա. Առ քեզ Աստուած:* Մնկ. բձ. *Փառաւորեալդ:* Ժմտ. *Ի տաճարի:* ԵՂ. շրկ. բձ. *Ուրախանան:* Հմբ. բձ. *Չքեզ Տէր օրհնեն:*

**ՏՈՒ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ:**

**Կատարի**

**Մաղթանք Հանրապետական  
յեկեղեցիս Հայաստանեայց:**

- 22 **ԳՂ. ԲԿ. Պահք:** Սրբոց կուսանացն  
Փեփրոնեայ, Մարիանեայ եւ Շուշա- 5  
նայ՝ դստերն Մեծին Վարդանայ: Օրհ.  
Մրտ. բկ. *Շնորհեա մեպ:* Հրց. Մրտ. դկ.  
*Բ. Որ փրաշափառ:* Մնկ. եւ Հմբ. դկ.  
*Յիշատակ Բրիստոսի:* Ժմտ. *Հարսնա-*  
*ցեալք:* Եշ. շրկ. բկ. *Յիշեալ Կմեպ:*
- 23 **ԴՂ. ԳՁ. Պահք:** Օրհ. Ապշ. գծ. *Չերծո*  
*վիս:* Հրց. Ապշ. գծ. *Ա. Փառաւորեալ* 6  
*անուն քո:* Մնկ. գծ. *Չքեպ բարեբանեն:*  
Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ.  
*Փառաբանութիւն:* Հմբ. գծ. *Չօրհներ-*  
*գութիւնս եւ Պահապան:*

**Աշնանամուտ եւ հասարակած**

**Տիւ եւ գիշեր հաւասար:**

- 24 **ԵՂ. ԳԿ. Պահք:** Սրբոց հայրապե- 7  
տացն Բարադամու, Անթիմոսի եւ  
Երանոսի: Օրհ. Մրտ. գկ. *Այսօր հրեշ-*  
*տակաց:* Հրց. Մրտ. դծ. Որք հաղոր-  
դացան: Մնկ. եւ Հմբ. գծ. *Հանդիսա-*  
*ցեալք:* Ժմտ. *Չհայրապետականն:*

Եշ. շրկ. գծ. *Չառաջնորդս:*

**Օ Առաջին բառորդ Լուսնի:**

- 25 **Ուր. ԴՁ. Պահք:** Օրհ. Ապշ. դծ. *Համ-*  
*բառնամ:* Հրց. Հնգ. ած. *Օրհնեալ ես:* 8  
Մնկ. *Խաչի* դծ. *Չօրութիւն:* Ժմտ. *Որ*  
*ըստ ամենայն:* Եշ. շրկ. դկ. *Որ ան-*  
*սկիւրն:* Հմբ. դծ. *Չքեպ կարդամք:* **Նա-**  
**խատօնակ:** Շրկ. ալ. *Քաջամարտիկ*  
(տես ի *Չայնագրեալ* շրկի., յերես 912, ուր  
չիք՝ երգել շրկ. ալ. *Ամենասուրբ Երրորդու-*  
*թեանն*, տես ի *Չայնբաղ* շրկ. 1888, 1999,  
յերես 84):
- 26 **Շբ. ԴԿ. Սրբոցն Գեորգայ զօրավա-**  
**րին, Ադոկտոսի եւ Ռոմանոսի երգե-** 9  
**ցողին:** Օրհ. ալ. *Քաջամարտիկ* կամ  
ալ. *Ամենասուրբ Երրորդութեանն:*  
Հրց. գկ. *Չինուորութիւնք:* Մնկ. եւ Եշ.  
շրկ. դծ. *Ով Սուրբ Գեորգ:* Ժմտ. *Չօրա-*  
*կան:* Ճշ. ընթ. (Իմս. 8.19-9.5: Ես. 42.1-8: Բ Կր.  
1.3-7: Ղկ. 12.2-9): Սրբ. *Սրբութիւն սրբոց:*  
*Յերեկոյին՝ Լոյս փութարթ:* Ս. *Աս-*  
*տուած՝ որ խաչեցար:* Հմբ. ալ. *Նշա-*  
*նաւ ամենայաղթ* (յատեանն): Բրգ. Ս.  
*Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահապանեա:*
- 27 **† Կիր. ԱՁ. Գ կիր. Չկնի Ս. Խաչին:**  
**Տօն Է Վարազայ Սրբոյ Խաչի:** Ի տե-

դի Հանգստեան շարականի՝ Այսօր 10  
անճառ եւ Տարածեալ: Աւորն. Խա-  
չելութեան: Ետուն ըմպել: Երգ՝ Տրտ-  
մահադորդ: Օրհ. ակ. Նշանաւ ամե-  
նայադթ, իւր սարօքն (յատեանն): Բրգ.  
Ասացուք: Ս. Աստուած՝ որ խաչե-  
ցար: Աւորն., Նորաստեղծեալ: Բրգ.  
Ս. Խաչիւս, Կեցո, Աղթ. Պահպանեա:  
Ժմտ. Առաջի պատուական: Եջ. շրկ.  
զձ. Քեկ Քրիստոսի: Ճշ. ընթ. (Առ. 3.18-  
26: Ես. 65.22-25: Գղ. 6.14-18: Ստ. 24.30-36):  
Սրբ. Ով է որպէս:

Յերեկոյին՝ Ս. Աստուած՝ որ խա-  
չեցար: Հմբ. զձ. Հրաշափառ տեսու-  
թիւն: Բրգ. Սուրբ Խաչիւս, Կեցո, Աղթ.  
Պահպանեա:

**Միջոց ուտիքն եօթն շաբաթ է:**

28 Բշ. ԱԿ. Սրբոյն Դաւթի Դնեցոյն եւ  
սրբոց վկայիցն Ղամբէոսի եւ Ղամ-  
բէուհոյն: Օրհ. Մրտ. ակ. Յամենայն 11  
ժամ: Հրգ. Մրտ. աձ. Չքեկ արդար:  
Մնկ. եւ Հմբ. բկ. Լցեալ աստուածա-  
յին: Ժմտ. Ի տաճարի: Եջ. շրկ. ակ. Ի  
տաճարի:

29 Գշ. ԲՁ. Սրբոցն Եւստաթէոսի եւ  
կնոջ նորա Թեոփիստեայ եւ եր-

կուց որդւոցն եւ սրբոց կուսանացն 12  
Երմոնեայ եւ Նեքտարիւնեայ: Օրհ.  
Մրտ. բձ. Օրհնեն պքեկ: Հրգ. Մրտ.  
ակ. Ա. Սուրբ Աստուած: Մնկ. բձ.  
Փառաւորեալդ: Ժմտ. Ի տաճարի: Եջ.  
շրկ. բձ. Ուրախանան: Հմբ. բձ. Չքեկ  
Տէր օրհնեն:

30 Դշ. ԲԿ. Պափք: Օրհ. Ապշ. բկ. Յա-  
մենայն ժամ: Հրգ. Ապշ. զձ. Բ. Փա-  
ռաւորեալ է անուն քո: Մնկ. բկ. 13  
Արթունք: Ժմտ. Որ ըստ ամենայն: Եջ.  
շրկ. դկ. Փառաբանութիւն: Հմբ. բկ.  
Յօգնութիւն:





# ՀՈԿՏԵՄԲԵՐ

31 ՕՐ



ԿՇԻՈՒՆ

- 1 **ԵՂ. ԳՁ.** Սրբոց իշխանացն Սահա- 14  
կայ եւ Համագասպայ: Օրհ. Մրտ. գձ.  
Չարիական մահ: Հրց. Մրտ. ալ. Բ.  
Որ բարձրեալդ ես: Մնկ. եւ Հմբ. դկ.  
ստղ. Արիացեալք: Ժմտ. Ի տաճարի:  
ԵՂ. շրկ. գձ. Պայծառացիր:  
☺ **ԼՐՈՒՄՆ ԼՈՒՄՆԻ:**
- 2 **Ուր. ԳԿ. Պահբ:** Օրհ. Ապշ. գկ. 15  
Քրիստոս Աստուած: Հրց. Հնգ. ալ.  
Գոհարանենք: Մնկ. Խաչի գկ. Ով  
սպասապան: Ժմտ. Որ ըստ ամենայն:  
ԵՂ. շրկ. դկ. Որ անսկիւրն: Հմբ. գկ.  
Տուր մեզ եւ Հովանի:
- 3 **Շբ. ԴՁ.** Սրբոցն Եօթանասնից եւ եր- 16  
կուց աշակերտացն Քրիստոսի: Օրհ.  
դկ. Իմաստութիւն երկնային, իւր սա-

Օ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

145

Լ

րօքն: Մնկ. ստղ. դկ. Առաքեալք Աս-  
տուծոյ: Ժմտ. Առաքեալք եւ վկայք:  
ԵՂ. շրկ. ալ. Որ սիրողդ էք: Ճշ. ընթ.  
(Իմս. 9.9-10.2: Ելք. 15.27-16.1: Բ Կր. 2.14-3.3:  
դկ. 10.1-9): Հմբ. աձ. Սուրբ եւ Տէր եւ Ի  
քէն հայցենք:

- 4 † **Կիր. ԴԿ. Դ կիր. Չկնի Ս. Խաչի:** 17  
Օրհ. դկ. Յաղթական: Հրց. դձ. Բ.  
Որ բարեբանեալդ ես: Մեծ. դձ. Աս-  
տուածածին գերագոյն: Ժմտ. Միա-  
ծին Որդի: ԵՂ. շրկ. դկ. Որ անբաւելի:  
Ճշ. ընթ. (Ես. 17.7-14: Բ Կր. 13.5-13: Մր. 11.27-  
33): Հմբ. դկ. Հրեշտակացն դասքն:
- 5 **Բշ. ԱՁ.** Սրբոցն Փոկասու հայրապե- 18  
տին եւ Երանոսի հետեւողին առա-  
քելոցն: Օրհ. Մրտ. աձ. Ժողովեալքս:  
Հրց. Մրտ. բձ. Ա. Անդակալ: Մնկ.  
աձ. Չճգնութիւն սրբոց: Ժմտ. Ի տա-  
ճարի: ԵՂ. շրկ. աձ. Պարծեսցին: Հմբ.  
աձ. Առաքինասէր վարուք:
- 6 **Գշ. ԱԿ.** Սրբոց կուսանացն Թեկ- 19  
դի, Վառվառեալ եւ Պեղիգեալ: Օրհ.  
Մրտ. ալ. Յամենայն ժամ: Հրց. Մրտ.  
բձ. Բ. Ընդ սուրբս քո: Մնկ. եւ Հմբ. դկ.  
Քեւ պարծի: Ժմտ. Հարսնացեալք: ԵՂ.  
շրկ. ալ. Ի տաճարի:

7 **ԴԶ. Պահք:** Օրհ. Այշ. բժ. *Դարձո* 20  
*սցատումն:* Հրց. Այշ. Աղցմի. գժ. Գ.  
*Օրհնեալ եւ Տէր:* Մնկ. բժ. *Մանկունք:*  
Ժմտ. *Որ ըստ ամենայն:* Ճշ. շրկ. դկ.  
*Փառաբանութիւն:* Հմբ. բժ. *Համբառ-*  
*նալով:*

8 **ԵՂ. ԲԿ. Սրբոցն Պանդալեոնի բժշկին,** 21  
**Երմողեայ քահանային եւ Եւարաբ-**  
**սեայ կուսին:** Օրհ. Մրտ. բկ. *Շնորհեա*  
*մեպ:* Հրց. Մրտ. բկ. Ա. *Օրհնեմք պեպ:*  
Մնկ. եւ Հմբ. դկ. *Յիշատակ Բրիս-*  
*տոսի:* Ժմտ. *Ի տաճարի:* Ճշ. շրկ. բկ.  
*Յիշեալ ցմեպ:*

9 **Ուր. ԳԶ. Պահք.** Օրհ. Այշ. գժ. *Չերծո* 22  
*սիս:* Հրց. Հնգ. բժ. *Որ թագաւորդ եւ:*  
Մնկ. *Խաչի* գժ. *Փայտ կենաց:* Ժմտ.  
*Որ ըստ ամենայն:* Ճշ. շրկ. դկ. *Որ*  
*անակիւքն:* Հմբ. գժ. *Չօրհներգութիւնս*  
*եւ Պաշապան:*

Օ Վերջին քառորդ Լուսնի:

10 **Շբ. ԳԿ. Սրբոց թարգմանչաց վար-** 23  
**դապետացն մերոց՝ Մեսրոպբայ,**  
**Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւ-**  
**թի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի**  
**Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեց-**  
**ւոյն:** Օրհ. ալ. *Որք զարդարեցին, իւր*

սարօքն: Մնկ. գժ. *Նմանեալ Մովսի-*  
*սի* (յոզնակի ասել): Ժմտ. *Չհայրապե-*  
*տականն:* Ճշ. շրկ. *(Ողորմեայն)* դժ. *Որ*  
*վշնորիս:* Ճշ. ընթ. (Իմս. 8.7-10: Ամս. 5.10-14:  
Ա Կր. 12.5-11: Ստ. 7.6-12): Հմբ. աժ. *Սուրբ*  
*եւ Տէր եւ Երկնաբաղաբացին:*

**Տօն ազգային եւ եկեղեցական՝**  
**ի յիշատակ գիւտի նշանագրացն հայոց**  
**եւ թարգմանութեանն Սուրբ Գրոց:**

11 † **Կիր. ԴԶ. Ե կիր. Չկնի Ս. Խաչի:** 24  
Օրհ. դժ. *Օրհնեսցուք:* Հրց. դժ. Գ. *Որ*  
*ի քառակերպեան:* Մեծ. դժ. *Խորանա-*  
*յարկ:* Ժմտ. *Միածին Որդի:* Ճշ. շրկ.  
դժ. *Թագաւոր Բրիստոս:* Ճշ. ընթ. (Ես.  
19.1-11: Գղ. 2.1-10: Սր. 12.35-44): Հմբ. դժ.  
*Կանանցն եւ Ահագին ձայնիւր:*

12 **ԲՂ. ԴԿ. Գիւտ նշխարաց Սրբոյն Գրի-** 25  
**գորիսի Աղուանից կաթողիկոսին,**  
**եւ սրբոց հարցն՝ Թաթլոյ, Վարոսի,**  
**Թումասու, Անտօնի, Կրօնիդեայ եւ**  
**Եօթն խոտաճարակացն, որք յին-**  
**նակնեայ վանսն կատարեցան:** Օրհ.  
դկ. *Արմատ ճշմարիտ* (տէս բժ. *Ով եր-*  
*ջանիկ):* Հրց. *(սրբոռանցն ասա)* ալ. *Որ*  
*վրդս աստուածային:* Մնկ. դկ. *Աս-*  
*տուածային հաւատոյ:* Ժմտ. *Չհայրա-*

պետականն եւ Ճգնաւորք Քրիստոսի: Եշ. շրկ. գկ. 3ովիւ քաջ: 3մբ. բժ. Յաւորս վերջին ժամանակի:

13 Գշ. ԱՁ. Սրբոց առաքելոցն՝ Անա- 26

նիայի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպոսի, Յովհաննու, Շիղայի եւ Սիւղիանոսի: Օրհ. դկ. Իմաստութիւն երկնային, իւր սարօքն: Մնկ. եւ 3մբ. ալ. Աշակերտք Քրիստոսի: Ժմտ. Առաքեալք եւ վկայք: Եշ. շրկ. ալ. Որ սիրողդ էք:

14 Դշ. ԱԿ. Պահք: Օրհ. Ապշ. ալ. Ծով 27

կենցաղոյս: 3րց. Ապշ. գժ. Դ. 3արցն մերոց: Մնկ. ալ. Լոյս փառաց: Ժմտ. Որ ըստ ամենայն: Եշ. շրկ. դկ. Փառաբանութիւն: 3մբ. ալ. Օգնական:

15 Եշ. ԲՁ. Սրբոցն Դիոնէսիոսի Արիս- 28

պագացւոյն եւ առաքելոցն Տիմոթէոսի եւ Տիտոսի: Օրհ. դկ. Իմաստութիւն երկնային, իւր սարօքն: Մնկ. եւ 3մբ. ալ. Աշակերտք Քրիստոսի: Ժմտ. Առաքեալք եւ վկայք: Եշ. շրկ. ալ. Որ սիրողդ էք:

16 Ուր. ԲԿ. Պահք: Օրհ. Ապշ. բկ. Յա- 29

մենայն ժամ: 3րց. 3նգ. դկ. Յախունից Աստուած: Մնկ. Խաչի բկ. Խաչն կե-

նարար: Ժմտ. Որ ըստ ամենայն: Եշ. շրկ. դկ. Որ անակիւքն: 3մբ. բկ. Յօգնութիւն:

● Ծնունդ Լուսնի:

17 † Ծբ. ԳՁ. Սրբոց աւետարանչացն՝ 1

Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու: Օրհ. գժ. Երանելի սուրբ առաքեալք, իւր սարօքն: Մեծ. Այսօր նոր: Մնկ. ալ. Աշակերտք Քրիստոսի (գԳ. տունն ասա՝ Փառք 3օր, իսկ Այժմ եւ միշտն՝ Բանին կենաց, յիշելով զանունս աւետարանչացն): Չկնի Տէրն յետ ստեղծմանին երգ՝ Մաքրապետ օրինակի եւ Յուրախութիւնս: Ժմտ. Առաքեալք եւ վկայք: Եշ. շրկ. ալ. Որ սիրողդ էք: Ըշ. ընթ. (Իմս. 9.13-10.2: Եզկ. 1.3-11: Զք. 6.1-8: Եփս. 4.7-13: Ղկ. 6.13-19): 3մբ. աժ. Սուրբ եւ Տէր եւ Ի քէն հայցեմք:

18 † Կիր. ԳԿ. 2 կիր. Չկնի Ս. Խաչի: 2

Օրհ. գկ. Երգեցէք: 3րց. դժ. Յորժամ ի խաչին: Մեծ. դժ. Մայր լուսոյ: Ժմտ. Միածին Որդի: Եշ. շրկ. գկ. Լուսով աստուածութեան: Ըշ. ընթ. (Ես. 20.2-21.6: Գղ. 4.3-18: Ղկ. 4.14-23): 3մբ. գկ. Չաստուածային եւ Չքոյարութիւնդ:

- 19 **ԲՉ. ԴՁ.** Սրբոցն Ղունկիանոսի հարիւրապետին, որ հաւատաց ի խաչելութիւնն Քրիստոսի եւ Յովսէփայ Աստուածածտին, Յովսէփայ Արեմաթացւոյն եւ բարեկամին Քրիստոսի Ղազարու եւ քերցն նորա Մարթայի եւ Մարիամոյ: Օրհ. դկ. *Իմաստութիւն երկնային*, իւր սարօքն: Մնկ. ստղ. դկ. *Յովսէփ քեպ հաւատացեալ* (տե՛ս. ի Ձայնբաղ շրկ., 1888 , 1999 յերես 201): Ժմտ. *Առաքեալք եւ վկայք*: ԵՂ. շրկ. գձ. *Յովսէփ ճշմարիտ*: Յմբ. դկ. *Իւղաբերից կանանցն*:
- 20 **ԳՉ. ԴԿ.** Սրբոցն Թէոդոտոսի քահանային, Չենոնի զինաւորին, Մակարայ, Եւդոքսեայ եւ Ռամելայ: Օրհ. Մրտ. դկ. *Ի յիշատակս*: Յրց. Մրտ. բկ. Բ. *Որք ի մարտի*: Մնկ. դկ. *Որք եկեալ ենք*: Ժմտ. *Ի տաճարի*: ԵՂ. շրկ. դկ. *Այսօր եկեղեցի*: Յմբ. դկ. *Երրորդութեանն սիրօղ*:
- 21 **ԴՉ. ԱՁ.** Պահք: Օրհ. Ապշ. աձ. *Հայր բապումողորմ*: Յրց. Ապշ. գձ. Ե. *Օրհնեալ ես Տէր... Որ հրաշայի*: Մնկ. աձ. *Հառաւօրտու*: Ժմտ. *Որ ըստ ամենայն*: ԵՂ. շրկ. դկ. *Փառաբանութիւն*: Յմբ.

- աձ. *Ինձ օգնութիւն եւ Համբարձի*:
- 22 **ԵՉ. ԱԿ.** Սրբոց Խարիթեանցն եւ սրբոց վկայիցն Արտեմեայ եւ Քրիստափորի, երկուց կանանցն Կալինիկեայ եւ Ակիւլինեայ: Օրհ. ալկ. *Յամենայն ժամ*: Յրց. Մրտ. գձ. Ա. *Որք զտանջանս*: Մնկ. եւ Յմբ. դկ. *Այսօր ընդ անմարմնոցն*: Ժմտ. *Ի տաճարի*: ԵՂ. շրկ. ալկ. *Ի տաճարի*:
- 23 **Ուր. ԲՁ.** Պահք: Օրհ. Ապշ. բձ. *Դարձոյցատումն*: Յրց. Յնգ. գձ. *Օրհնեմք պքեպ*: Մնկ. *Խաչի բձ. Ապաքինեցաք*: Ժմտ. *Որ ըստ ամենայն*: ԵՂ. շրկ. դկ. *Որ անակիւրն*: Յմբ. բձ. *Համբարնալով*:  
 ○ Առաջին քառորդ Լուսնի:
- 24 **Շր. ԲԿ.** Սրբոց երկոտասանից վարդապետացն՝ Ռեթնոսի, Դիոնեսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղէմացւոյն, Եփրեմի Խուրին Ասորւոյ, Բարսղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին եւ Կիւրղի Աղէքսանդրացւոյն: Օրհ. ալկ. *Որք զարդարեցին*, իւր սարօքն: Մնկ. գձ. *Հանդիսացեալք*: Ժմտ. *Հայ-*

|   |     |           |   |
|---|-----|-----------|---|
| Օ | 152 | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|-----|-----------|---|

րապետականն (յոզնակի ասել): Եշ. շրկ. դձ. Այսօր երկնայնոցն: Ճշ. ընթ. (Առ. 11.2-11: Ես. 61.3-7: Եբր. 13.7-9: Յի. 16.33-17.8):

Յերեկոյին՝ Լոյս զուարթ: Ս. Աստուած՝ որ խաչեցար: Յմբ. ամ. Հրաշակերտ (յատեանն): Բրգ. Ս. Խաչիս, Կեցո, Աղթ. Պահպանեա:

- 25 † Կիր. ԳՁ. Է կիր. 2կնի Ս. Խաչի: Գիւտ Ս. Խաչի: Ի տեղի Հանգստեան շարականի՝ Այսօր անճառ եւ Տարածեալ: Աւտրն. Խաչելութեան: Ետուն ընկել: Երգ՝ Տրումահաղորդ: Օրհ. ամ. Հրաշակերտ եւ զօրեղ, իւր սարօքն (յատեանն): Յորժամ երգեսցեն զԳ. տունն Հարցի, խնկարկեսցեն Ս. Սեղանոյն եւ ժողովրդեանն: Ս. Աստուած՝ որ խաչեցար: Ժմտ. Առաջի պատուական: Եշ. շրկ. բձ. Այսօր խնդրի: Ճշ. ընթ. (Իմս. 14.1-8: Ես. 33.22-34.1: Ա Կր. 1.18-24: Մտ. 24.27-36): Սրբ. Ով է որպէս:

Յերեկոյին՝ Ս. Աստուած՝ որ խաչեցար: Յմբ. բձ. Ապախնեցար: Բրգ. Ս. Խաչիս, Կեցո, Աղթ. Պահպանեա:

- 26 Բշ. ԳԿ. Սրբոցն Անաստասայ քահանային, Վարոսի, Թեոդորիտեայ եւ որդւոց նորա եւ որք ընդ նմա

|   |           |     |   |
|---|-----------|-----|---|
| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | 153 | Լ |
|---|-----------|-----|---|

կատարեցան: Օրհ. Մրտ. գկ. Այսօր հրեշտակաց: Հրգ. Մրտ. դձ. Ա. Յուսացեալքն: Մնկ. գկ. Ընդ զուարթունա: Ժմտ. Ի տաճարի: Եշ. շրկ. գկ. Ճգնաւորք: Յմբ. գկ. Այսօր մարտիրոսաց:

- 27 Գշ. ԴՁ. Սրբոցն Հիպիրիքեանցն, որք ի Սամուսատ կատարեցան եւ Սեւերիանոսի Սեբաստացւոյն, Բաբելայ ծերոյն եւ ութսուն եւ չորից աշակերտաց նորին: Օրհ. Մրտ. դձ. Այսօր յիշատակ: Հրգ. Մրտ. դձ. Բ. Սուրբ եւ Տէր: Մնկ. դձ. Չքեկ կարդային: Ժմտ. Ի տաճարի: Եշ. շրկ. դձ. Ճգնութիւնք: Յմբ. դձ. Յիշատակ Է:
- 28 Դշ. ԴԿ. Պահք: Օրհ. Ապշ. դկ. Բրիւտոս Աստուած: Հրգ. Ապշ. գձ. Չ. Օրինեալ եւ Տէր... Վասն ուխտի: Մնկ. դկ. Է անուն: Ժմտ. Որ ըստ ամենայն: Եշ. շրկ. դկ. Փառաքանութիւն: Յմբ. դկ. Մոցեն:
- 29 Եշ. ԱՁ. Սրբոյն Յովհաննու Ոսկերեան Հայրապետին: Օրհ. ակ. Որք պարդարեցին, իւր սարօքն: Մնկ եւ Յմբ. սող. դկ. Որ յանկիւրն: Ժմտ. Չհայրապետականն: Եշ. շրկ. գձ. Չառաջնորդս:

30 Ուր. ԱԿ. Պահք: Օրհ. Ապշ. ալ. 14

Ծով կենցաղոյս: 3րց. 3նգ. գկ. Բանդ  
Աստուած: Մնկ. Խաչի ալ. Մեղան քո  
Տէր: Ժմտ. Որ ըստ ամենայն: Եշ. շրկ.  
դկ. Որ անսկիւրն: 3մբ. ալ. Օգնական:

31 † Ծբ. ԲՁ. Տօն ամենայն սրբոց՝ հնոց 15

եւ նորոց, յայտից եւ անյայտից: Օրհ.  
գծ. Երանելի սուրբ Առաքեալք: 3րց.  
դկ. Առ քեզ Աստուած: Մեծ. դկ. Նա-  
հապետացն: Ողորմեա (Մարգարեից)  
դծ. Որ աւետաւոր: Տէր յերկ. (Վարդա-  
պետաց)՝ դծ. Այսօր երկնայնոցն: Մնկ.  
(Կուսանաց)՝ դկ. Յիշատակ Զրիստոսի  
եւ (Մարտիրոսաց)՝ դկ. Որք եկեալ ենք:  
Ժմտ. Բարեխօսութեամբ սրբուհոյ:  
Եշ. շրկ. բծ. Պարծանք եկեղեցոյ եւ  
(Թագաւորաց)՝ բծ. Աստուած փրկիչ  
մեր: Ճշ. ընթ. (Իմս. 3.1-8: Ես. 33.5-8: Եբր.  
11.32-12.2: Ղկ. 12.4-9): 3մբ. ած. Սուրբ եւ  
Տէր եւ Երկնաքաղաքացին:

Այսօր յերեկոյին Վեհափառ  
եւ Սրբազնագոյն Հայրապետն ազգիս  
մեծաշուք հանդիսիւ եկեղեցականաւ  
իջանէ ի Մայր Տաճարն:

☺ Լրումն Լուսնի:

## ՆՈՅՏԵՄԲԵՐ

30 ՕՐ



ԿԱՐԻՃՆ

1 † Կիր. ԲԿ. Ը կիր. Չկնի Ս. Խաչի: Օրհ. 16  
բկ. Փարաւօն: 3րց. դկ. Ա. Որ կամենա-  
ւոր: Մեծ. դկ. Աստուածածին Մայր եւ  
Կոյս: Ժմտ. Միածին Որդի: Եշ. շրկ. բկ.  
Օրհնութիւն ի բարձունս: Ճշ. ընթ. (Ես.  
22.15-24: Եփս. 1.1-14: Ղկ. 8.17-21): 3մբ. բկ.  
Առաւօտեան սուրբ կանայքն:

Քսանմեկերորդ տարեդարձ օծման

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

Ծայրագոյն Պատրիարքի

եւ Սրբազնագոյն Կաթողիկոսի

Ամենայն Հայոց:

Չկնի Սրբոյ Պատարագի կատարի  
մաղթանք Հայրապետական յամենայն  
Եկեղեցիս Հայաստանեայց:


2 Բշ. ԳՁ. Սրբոցն Ստեփաննոսի 3ռով- 17  
մայ Հայրապետին եւ բախանայիցն,

սարկաւագացն եւ ժողովրդոցն: Օրհ.  
Մրտ. գձ. *Չարիական մահ*: Յրց. Մրտ.  
դկ. Ա. *Առ թեպ Աստուած*: Մնկ. դձ.  
*Ցնծայ այսօր*: Ժմտ. *Չհայրապետա-*  
*կանն*: Եշ. շրկ. գձ. *Չառաջնորդս*: Հմբ.  
դկ. *Մարտիրոս եւ վկայ*:

- 3 ԳՅ. ԳԿ. Սրբոցն Ակիփսիմեայ եպիս- 18  
կոպոսին, Յովսէփայ քահանային, Ա-  
յիթալայ սարկաւագին եւ Պղատոնի  
վկային: Օրհ. Մրտ. գկ. *Այսօր հրեշ-*  
*տակաց*: Յրց. Մրտ. դկ. Բ. *Որ ցիրաշա-*  
*փառ*: Մնկ. գկ. *Ընդ ցուարթունս*: Ժմտ.  
*Ի տանարի*: Եշ. շրկ. գկ. *Ճգնաւորք*:  
Հմբ. գկ. *Այսօր մարտիրոսաց դասքն*:

- 4 ԴԶ. ԴԶ. Պահք: Օրհ. Ապշ. դձ. Համ- 19  
բառնամ: Յրց. Ապշ. *Աղցմի*. գկ. Ա.  
*Սուրբ Աստուած*: Մնկ. դձ. *Մանկունք*:  
Ժմտ. *Որ ըստ ամենայն*: Եշ. շրկ. դկ.  
*Փառաքանութիւն*: Հմբ. դձ. *Զթեպ կար-*  
*դամք*:

- 5 ԵՇ. ԴԿ. Սրբոց հայրապետացն՝ Մետ- 20  
րոփանոսի, Աղէքսանդրոսի, Պօղո-  
սի խոստովանողին եւ սրբոց նօտա-  
րացն Մարկիանոսի եւ Մարտիրոնի:  
Օրհ. դկ. *Ի յիշատակս*: Յրց. Մրտ. դձ.  
Գ. *Որք հաղորդեցան*: Մնկ. դձ. *Այսօր*



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կոնստանդնուպոլսի Բայոց Կաթողիկոսի  
օծումն ու գահակալութիւնը (1999)

երկնայնոցն: Ժմտ. Չհայրապետա-  
կանն: Եշ. շրկ. զձ. Չառաջնորդս: Յմբ.  
զձ. Հանդիսացեալք:

**6 Ուր. ԱԶ. Պահք:** Օրհ. Ապշ. աձ. 21

Հայր բապումողորմ: Հրց. Հնգ. դձ. Որ  
փառօք Հօր: Մնկ. Խաչի աձ. Հրաշա-  
կերտ: Ժմտ. Որ ըստ ամենայն: Եշ.  
շրկ. դկ. Որ անսկիւրն: Յմբ. աձ. Ինձ  
օգնութիւն եւ Համբարձի: Նախատօ-  
նակ: Ծրկ. բկ. Որ յանէից, իւր սարօքն  
(յատեանն): Քրգ. Ս. Ճգնաւորօքն: Աղթ.  
Տէր Աստուած մէր, որ կարգեցեր (տես  
ի Խորհրդատեսորի):

**7 † Ծբ. ԱԿ. Սրբոց հրեշտակապետացն՝ 22**

**Գաբրիէլի, Միքայէլի եւ ամենայն**  
**երկնային զօրացն:** Չկնի Ճանապարհ  
մոլորելոցին երգ՝ Դասք անմարմնոցն  
(ի մէջ Արարչականի): Օրհ. բկ. Որ յա-  
նէից ստեղծեր, իւր սարօքն (յատեանն):  
Ալեւուք Հրեշտակապետաց՝ Որ արար,  
փոխ՝ Օրհնեցէք զՏէր, ապա Դասք  
հրեշտակաց եւ Թագ. յաւիտ.՝ Երկինք  
եւ երկիր: Մեծ. գկ. Մայր եւ Կոյս: Քրգ.  
Աստուած մեծ: Մնկ. ստղ. դկ. Երկնա-  
ւոր հօտ: Ժմտ. Չոր օրհնեն եւ Այսօր  
երկրաւորս: Եշ. շրկ. դկ. Այսօր ուրա-



|   |     |          |   |
|---|-----|----------|---|
| Օ | 160 | ՆՈՅԵՄԲԵՐ | Լ |
|---|-----|----------|---|

*խաղեալ: Ճշ. ընթ. (Ծն. 18.33-19.2: Յոք. 38.4-7: Ես. 6.1-7: Եզկ. 1.1-20: Եբր. 1.6-14: Մտ. 18.10-14): Սրբ. Հրեշտակային:*

Յերեկոյին՝ *Լոյս պուարթ: Ս. Աստուած՝ որ յարեալ: Զմբ. ած. Սուրբ եւ Տէր եւ Երկնաքաղաքացին: Այժմ եւ միշտն* ասել ած. *Այսօր եւ հրեշտակք* (տես ի *Չայնագրեալ* շարականի, յերես 761, ի մէջ *Ողորմեայի* նաւակատեաց *Սրբոյ Խաչի*, Չայնքաղ շարական, տպ. 1888, յերես 366): Բրգ. *Խնդր., Կեցո, Աղթ. Թագ. խաղաղութեան:*

- 8 † **Կիր. ԲՁ. Թ կիր. Չկնի Ս. Խաչի:** 23  
Օրհ. բծ. *Օրհնեսցուք:* Հրգ. դկ. *Բ. Այսօր ցնծան:* Մեծ. դկ. *Աստուածածին պայծառ:* Ժմտ. *Միածին Որդի:* Ճշ. շրկ. բծ. *Թագաւորին յախտենից:* Ճշ. ընթ. (Ես. 24.1-12: Եփս. 5.15-33: Ղկ. 8.49-56): Հմբ. բծ. *Ի գերեզման, Եկին ի գերեզման եւ Չայն աւետաւոր:*

○ **Վերջին բառորդ Լուսնի:**

- 9 **Բշ. ԲԿ. Սրբոցն Մելիտոսի Անտիոքայ** 24  
**հայրապետին, Մինասայ Եգիպտացւոյն, միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային եւ Շի-**

|   |          |     |   |
|---|----------|-----|---|
| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | 161 | Լ |
|---|----------|-----|---|

